# Հայտարարություն

**Մրցույթ ՝<< ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Հ. Ճգնավորյանի անվան հ 5 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ –ի դասվարի /23 դասաժամ/ , աշխարհագրության /6 դասաժամ/, մաթեմատիկայի /6 դասաժամ/, բնության/15 դասաժամ/, պատմության երկու /22 դասաժամ և 14դասաժամ/ ուսուցչի պաշտոնի թափուր տեղերի համար:**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում /Ձև 1/,
- 1 լուսանկար՝ 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ(դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում) -
- ինքնակենսագրություն(Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. սեպտեմբերի 9-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. սեպտեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին, Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Հ. Ճգնավորյանի անվան հ 5 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Արտաշատ, Աճառյան 115:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098)-098-456 հեռախոսահամարով: